

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Մարիանա Քոչարյան

Տնտեսագիտության թեկնածու
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Նալբանդյան 128, 0025 Երևան, Հայաստան
Էլ. հասցե՝ marianakocharyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 16.11.2018, գրախոսվել է 11.10.2019, ընդունվել է
տպագրության 06.12.2019

Ներածություն

Ժամանակակից հասարակության մեջ քաղաքակրթական զարգացումների հիմքում տեղեկատվական գործընթացներն են, որոնցում վճռորոշ դերակատարություն ունեն տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները: Դրանց ներդրումը տարբեր բնագավառներում նպաստում է կրթության տեղեկատվայնացմանը, որն ուսուցման գործընթացի բարեփոխման ու արդիականացման կարևոր պայման է:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ կրթության ոլորտում ՏՀՏ ներդրումն ու արդյունավետ կիրառումն ուղղակիորեն կախված են պետական աջակցությունից: Պետական քաղաքականությունն այս ոլորտում, առաջին հերթին, պահանջում է անհրաժեշտ օրենսդրանորմատիվային դաշտի ձևավորում և դրա հետևողական կիրառում:

Նշենք, որ ՀՀ-ում կրթության ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը ձևավորվում է Սահմանադրության, Հանրապետության նախագահի հրամանագրերի, ոլորտը կարգավորող օրենքների, որոշումների, հրամանների և այլնի հիման վրա: Այս առումով առանցքային է «Կրթության մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է դեռևս 1999 թ.: Այստեղ ներկայացված են կրթության բնագավառի պետական քաղաքականության ընդհանուր դրույթները՝ նպատակներ, սկզբունքներ, կրթական իրավունքի պետական երաշխիքներ, կրթական համակարգ, դրա կառավարում և այլն:

Կարևորվում է նաև ՀՀ-ում ՏՏ ոլորտի պետական կարգավորումը, որը, սկսած 2000 թ., Կառավարությունը ճանաչել է տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Աներկբայորեն կարող ենք ասել, որ կրթության ոլորտում առկա մարտահրավերները և զարգացման անհրաժեշտությունը պահանջում են ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի անընդհատ կատարելագործում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի ընդունումից բավական ժամանակ է անցել, ինչպես նաև և՛ կրթության, և՛ ՏՏ ոլորտները դինամիկ ու արագ զարգացող են, իսկ արտաքին միջավայ-

րը՝ անորոշ, ապա վերջիններիս արագ արձագանքելու նպատակով անընդհատ անհրաժեշտություն է առաջանում կատարելագործելու ոլորտները կանոնակարգող դաշտը՝ ընդհուպ կրթության ոլորտում ՏՀՏ ներդրմանն ու կիրառմանն ուղղված նորմատիվային ակտերի ընդունումը:

Ինչպես նշեցինք, կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման ու կրթության տեղեկատվայնացման գործընթացի հաջողության կարևոր նախապայմաններից մեկն էլ օրենսդրափրավական դաշտի առկայությունն է, որը մի կողմից՝ պետք է նպաստի կրթության ոլորտի տեղեկատվայնացման արդյունավետ գործընթացին, ապահովի կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության բոլոր շերտերի համար, իսկ մյուս կողմից՝ նպաստի հասարակական կյանքում տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի մեծացմանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ձևավորելով *«տեղեկատվական հմտություններ»*: *Տեղեկատվական հմտությունները հնարավորություն կտան սովորողներին կատարելու ինքնուրույն աշխատանք, այն է՝ յուրացնելու մասնագիտական կրթական ծրագիրն ուսումնաճանաչողական գործունեության որոշակի համակարգով, որտեղ դասախոսը, որպես ուղղորդող, իրականացնում է պլանավորում և արդյունքների գնահատում*: Այս հմտությունները պահանջվում են, որ մարդը տեղեկատվական դարաշրջանում կարողանա որոնել, գտնել, մշակել անհրաժեշտ ու հավաստի տեղեկատվություն, վերլուծել այն և, իհարկե, փոխանցել: Հատկապես կարևորվում է դասավանդողի դերը. նա պետք է կարողանա սովորողներին փոխանցել ճիշտ կողմնորոշվելու կարողություններն ու հմտությունները:

Կատարելով կրթական ոլորտի օրենսդրական դաշտի վերլուծություն՝ ակնհայտ է, որ հատկապես մասնագիտական ուսումնական հաստատությունները ՏՀՏ կիրառելու հարցում որևէ սահմանափակում չունեն¹: Գործող օրենսդրությունն ընդամենը օժանդակում է կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման ակտիվացմանը և կրթության տեղեկատվայնացման մակարդակի բարձրացմանը:

Ըստ ուսումնասիրությունների՝ ՀՀ-ում ՏՀՏ կիրառում են անխտիր բոլոր ուսումնական հաստատությունները կրթական բոլոր մակարդակներում՝ հանրակրթությունից մինչև հետբուհական: Գործող նորմատիվային դաշտը հնարավորություն է տալիս իրականացնելու կրթության տեղեկատվայնացում, սակայն մի շարք փաստաթղթեր հընթացս կորցնում են իրենց արդիականությունը՝ կապված ՏՏ ոլորտի արագ զարգացման հետ:

Հետևաբար՝ կարող ենք փաստել, որ օրենսդրորեն պետք է սահմանվեն ուսումնական հաստատությունների կողմից ՏՀՏ մշակման, ուսումնական

¹ «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ ՀՀ կառավարության որոշում:

գործընթացում դրանց կիրառման, տրամադրման, էլեկտրոնային փոխհարաբերությունների կարգավորման կանոններ: Ավելին, գործող օրենսդրությունը չի նպաստում կրթության ոլորտի տեղեկատվայնացման գործընթացի ակտիվացմանը, էլեկտրոնային ծառայությունների մատուցմանը, տեղեկատվական հասարակության ձևավորմանը, իսկ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները շարունակական և բուռն զարգացում են ապրում՝ թափանցելով հասարակական կյանքի բոլոր ոլորտներ: Այսպիսով՝ կրթության ասպարեզում SCS ստեղծման, ներդրման և կիրառման իրավական կարգավորման հարցերն ակնհայտորեն հետ են մնում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումից, ուստի **անհրաժեշտ է ձևավորել ՀՀ կրթության ոլորտի տեղեկատվայնացման ազգային հայեցակարգ**, որի ընդունումն ու հետևողական կիրառումը թույլ կտան առավել արդյունավետ դարձնել կրթության ոլորտում SCS կառավարման գործընթացը: Առաջարկվող հայեցակարգը պետք է հիմնված լինի ՀՀ-ում կրթության և SS ոլորտը կարգավորող օրենսդրամատիվային ակտերի, զարգացման ռազմավարության և այլ ծրագրերի վրա:

Կրթության ոլորտի տեղեկատվայնացման ազգային հայեցակարգը որպես դրույթների ամբողջություն, պետք է հիմնվի Սահմանադրության վրա՝ բովանդակելով կրթության բոլոր մակարդակներում տեղակատվայնացման գործընթացի հիմնական նպատակը, խնդիրները, սկզբունքներն ու ուղղությունները: Կրթության տեղեկատվայնացումը երկրում հասարակության տեղեկատվայնացման գործընթացի ամենակարևոր տարրերից մեկն է, քանի որ այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք ձեռք են բերվում SCS կիրառմամբ կրթության ընթացքում, հետագայում որոշիչ են դառնալու հասարակության զարգացման գործընթացներում:

Անդրադառնալով «տեղեկատվայնացում» եզրույթին՝ նշենք, որ դրա ամբողջական սահմանումն առաջին անգամ տվել է ակադեմիկոս Ա.Պ. Երշովը: Նրա բնորոշմամբ՝ տեղեկատվայնացումը միջոցառումների համալիր է՝ ուղղված հավաստի, սպառիչ և արդիական գիտելիքների լիարժեք օգտագործման ապահովմանը մարդկանց գործունեության բոլոր ոլորտներում²:

Ինչպես ներկայացնում են պրոֆեսորներ Ս.Գ. Գրիգորևը և Վ.Վ. Գրինշկունը, կրթության տեղեկատվայնացումը գիտագործնական գործունեության ոլորտ է՝ նպաստելու տեղեկատվության հավաքման, պահպանման, մշակման և տարածման մեթոդների ու միջոցների կիրառմանը, առկա և ձևավորվող նոր գիտելիքների համակարգմանը՝ կրթության և դաստիարակության հոգեբանական-մանկավարժական նպատակներին հասնելու շրջանակներում³:

² Ершов 2006, 14:

³ Григорьев 2005, 14.

Կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության» հայեցակարգում (2014 թ.) նշվում է. «Տեղեկատվայնացումը հասարակության զարգացման բնականոն օրինաչափություն է, նրա առաջընթացի անհրաժեշտ պայման: ...տեղեկատվայնացումը տեղեկատվական ռեսուրսների կազմավորման և օգտագործման հիման վրա քաղաքացիների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և հասարակական միավորումների տեղեկատվական պահանջների բավարարման և իրավունքների իրացման համար օպտիմալ պայմանների ստեղծման սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական կազմակերպչական գործընթաց է»⁴:

Նշենք նաև, որ հայրենական գրականության մեջ «կրթության տեղեկատվայնացում» հասկացության համապարփակ սահմանում դեռևս չկա: Հետևաբար՝ առաջարկվող հայեցակարգում անհրաժեշտ է ձևակերպել **«կրթության տեղեկատվայնացում» հասկացության սահմանումը՝** վերջինս դիտարկելով ոչ միայն որպես նոր կրթական տեղեկատվական տեխնոլոգիաների գոտ մշակում և կիրառում, այլև մի ամբողջ կենսապարբերաշրջան՝ պլանավորման, հետազոտության, մշակման, ՏՏ ստեղծման, ներդրման, զարգացման և զանգվածային կիրառման գործընթաց: Ըստ այդմ՝ ի վերջո ապահովվում է կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակցի ուսուցման, ուսումնառության և գործունեության պայմանների բարելավման անհրաժեշտ տեղեկացվածության մակարդակ՝ կրթական ազգային համակարգի բոլոր ձևերում:

Այսպիսով՝ կրթության տեղեկատվայնացումը կրթական տեղեկատվական ռեսուրսների հավաքման, մշակման, օգտագործման և տարածման հիման վրա կրթական գործընթացի բոլոր մասնակիցների գիտակրթական-տեղեկատվական պահանջների բավարարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է:

Կրթության ոլորտի տեղեկատվայնացման հայեցակարգը, որպես պաշտոնական փաստաթուղթ, պետք է ներկայացնի կրթության ազգային համակարգի առջև ծառայած խնդիրների լուծման հնարավոր ուղիները՝ ըստ ՏՀՏ արդյունավետ կիրառման համակարգված ու փոխկապակցված մեթոդների:

⁴ «Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության» հայեցակարգ, ՀՀ կառավարության որոշում, հաստատվել է 19.03.2014 թ., էլ. աղբյուր՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/03/11-20_1ardz.pdf.

Սահմանադրությունում նշված է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»⁵: Հետևելով Սահմանադրությանը՝ կրթության տեղեկատվայնացման ազգային հայեցակարգի գլխավոր նպատակը պետք է համարել կրթության բոլոր մակարդակներում ու ձևերում կրթական գործընթացի մասնակիցների լիարժեք և արդյունավետ մասնակցության ապահովումը, որը հնարավոր է իրագործել ըստ հետևյալ քայլերի.

- հասարակության բոլոր անդամների համար, անկախ բնակության վայրից, որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ստեղծում՝ ազգային և միջազգային չափորոշիչներին համապատասխան.

- կրթության միջոցով այնպիսի անհատների ձևավորում, որոնք հարմարեցված կլինեն տեղեկատվական հասարակության կյանքին՝ դրա բոլոր հնարավորություններով, սպառնալիքներով, մարտահրավերներով և ռիսկերով հանդերձ:

Ինչ վերաբերում է կրթության տեղեկատվայնացման հայեցակարգի իրագործմանը, ապա այս առումով, կարծում ենք, պետք է լուծել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ անհրաժեշտ կրթական ռեսուրսների և ծառայությունների, մոդելների և մեթոդների մշակում ու արդյունավետ կիրառում, ինչպես նաև մասնագետների պատրաստում:

Առաջարկվող հայեցակարգը համալիր բնույթ է կրում, որը պահանջում է համաձայնեցված գործողություններ կրթական համակարգի բոլոր ուղղություններով: Նախևառաջ, անհրաժեշտ է արդյունավետորեն համադրել կրթական գործընթացի նոր՝ արդիական և ավանդական ձևերը: Հայեցակարգն իրագործելիս կրթական գործընթացում նոր ձևերի և մեթոդների ներդրման առումով հարկ է խուսափել ծայրահեղ մոտեցումներից, մասնավորապես՝ չպետք է իրականացնել կրթական գործընթացի ավանդական ձևերի ամբողջական կամ մասնակի չարդարացված փոխարինում: Այստեղից էլ առաջ է գալիս մյուս հանգամանքը՝ շահադրման ձևերի և վարչական մեթոդների համադրության անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ առաջարկվող հայեցակարգի արդյունավետ իրագործման նպատակով պետք է նախապես մշակել միջոցառումների ծրագիր, որի շնորհիվ հնարավորություն կընձեռվի ապահովելու՝

- 1) բնակչության համար որակյալ կրթական ծառայություններ ստանալու հավասար պայմաններ՝ ըստ այդմ ձևավորելով տեղեկատվական հասարակության պահանջները բավարարող անհատներ,

- 2) էլեկտրոնային կրթական ծառայություններից օգտվելու հասանելիություն բնակչության մեծամասնության համար,

⁵ ՀՀ Սահմանադրություն (2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), ընդունվել է 06.12.2015 թ., հոդված 39:

3) միասնական կրթական միջավայր՝ ՏՀՏ կիրառմամբ, որտեղ լայնորեն կներդրվի հեռավար կրթությունը,

4) ուսումնական նյութերի տպագրման մակարդակի էական նվազում՝ ի հաշիվ էլեկտրոնային ռեսուրսների:

Հայեցակարգով նախատեսված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել կրթության տեղեկատվայնացման հետևյալ հիմնական միջոցառումները՝ ըստ կրթական ձևերի:

Հանրակրթության ոլորտի մասնակիցները պետք է ստանան գիտելիքներ և հմտություններ ՏՀՏ կիրառման վերաբերյալ, ՏՀՏ կառուցվածքի վերաբերյալ և մարդկային գործունեության տարբեր ոլորտներում ՏՀՏ դերի և նշանակության վերաբերյալ: Այնուհետև գիտելիքներն ու հմտությունները, որոնք դպրոցականները ձեռք են բերում հանրակրթական ուսումնական հաստատություններում, պետք է էլ ավելի զարգացնել մասնագիտական կրթություն ստանալիս: Այսինքն՝ միջնակարգ կրթություն ստացած աշակերտը պետք է սահուն տիրապետի վերոնշյալ հմտություններին: Իսկ մասնագիտական կրթության ժամանակ ՏՀՏ կիրառման գիտելիքներն ու հմտությունները, որոնք ստացել են հանրակրթական ուսումնական հաստատություններում, պետք է զարգացնել և ամրապնդել շնորհիվ ՏՀՏ առավելագույն կիրառման:

Մասնագիտական կրթության տեղեկատվայնացման ժամանակ պետք է իրականացնել հետևյալ քայլերը.

1. Ուսումնական գործընթացում առավելագույնս կիրառել տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ՝ կրթության արդյունավետության բարձրացման և հասանելիության նպատակով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՏՀՏ կիրառումը հնարավորություն է տալիս կրճատելու այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են ուսումնական տարածքները, տպագիր մասնագիտական գրականության քանակը, դասավանդման ժամանակը և այլն: Բացի այդ, նորագույն կրթական տեխնոլոգիաների կիրառմամբ նյութի մատուցումը ավելի հասանելի և դյուրըմբռնելի է:

2. Ե՛վ նախնական, և՛ միջին, և՛ բարձրագույն մասնագիտական հաստատություններում սովորողները պետք է ստանան հատուկ մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ՝ ՏՀՏ-ն իրենց մասնագիտական գործունեության ժամանակ կիրառելու վերաբերյալ:

Այսպիսով, կարծում ենք, առաջարկվող հայեցակարգի ընդունումն ու կիրառումը հնարավորություն կտան ապահովելու մի շարք արդյունքներ, որոնք ներկայացված են աղյուսակի տեսքով (աղյուսակ):

Հայեցակարգի իրականացման շրջանակում կարևորում ենք նաև դրա ֆինանսական կողմը, որը լուծելու նպատակով, կարծում ենք, անհրաժեշտ է ապահովել բոլոր արտաքին սուբյեկտների համագործակցություն

ու հնարավոր աջակցությունը, մասնավորապես՝ պետական բյուջեից հասկացումներ, արտաբյուջետային ֆինանսավորում, հայրենական և արտասահմանյան կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների միջոցների ներգրավում և այլն:

Ինչպես ցանկացած այլ ծրագրի, այնպես էլ այս հայեցակարգի իրականացման ժամանակ պահանջվում է ճիշտ ընտրել այն գործոնները, որոնք ինչ-որ չափով կարող են ազդել դրա արդյունավետության վրա:

Այսպիսով՝ կրթության տեղեկատվայնացման և տվյալ ոլորտում SCS կիրառման մակարդակի վրա ազդող կարևոր գործոններից են մասնագիտական որակավորման պակասը և տեղեկատվայնացման ենթակառուցվածքի առկայությունը: Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ երկրորդ գործոնը Հայաստանում բավարար չափով զարգացած է, իսկ ինչ վերաբերում է առաջինին, ապա այս առումով անեյիքներ շատ կան: Մասնավորապես՝ անհրաժեշտ է, որ բոլոր մակարդակներում և կրթաձևերում դասավանդողները մասնակցեն համապատասխան որակավորման և վերապատրաստման դասընթացների, որոնք կարող են կազմակերպվել ինչպես աշխատավայրերում, այնպես էլ տարբեր ուսուցման կենտրոններում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունը նույնպես իրականացնում է համանման ծրագրեր: Անշուշտ, դասավանդողների դերակատարությունը որոշիչ է կրթության արդյունավետության և որակի բարձրացման գործում, ուստի մշտական ուշադրությունը նրանց որակավորման և վերապատրաստման խնդիրներին հարկավոր է, ինչպես աշխատանքի ընդունվելիս, այնպես էլ դրա ընթացքում:

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների սղությունը՝ կարևորվում է նաև ինքնակրթության հարցը: Ինչ վերաբերում է դասավանդողներին շահադրդելու հիմնախնդրին, ապա դա, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, պակաս կարևոր չէ, քանի որ նույնիսկ կրթական հաստատությունների՝ համապատասխան տեխնոլոգիաներով հագեցած լինելու պարագայում հաճախ դրանցից օգտվողների թիվը շատ փոքր է: Հետևաբար՝ դասավանդողները պետք է շահագրգռված լինեն կրթության ոլորտում SCS արդյունավետ կիրառման գործում:

Ամփոփելով առաջարկվող հայեցակարգին առնչվող հիմնախնդիրների քննարկումը, պետք է նշել, որ տեղեկատվական հասարակության լիարժեք անցման գործընթացի հիմքում դրա բոլոր անդամների՝ SCS արդյունավետ կիրառման վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների տիրապետումն է՝ ըստ կրթության ազգային համակարգի կողմից առաջարկվող պահանջներին: Նշենք, որ Հայաստանում կրթության տեղեկատվայնացման գործընթացն սկզբնավորվել է դեռևս խորհրդային տարիներ-

րին: Ըստ ուսումնասիրությունների՝ դրա զարգացման պատմությունը կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

I փուլ 1970-1980թթ.	II փուլ 1979-1990թթ.	III փուլ 2000-2005թթ.	IV փուլ 2005թ.-ից մինչև այսօր
<ul style="list-style-type: none"> • ԽՍՀՄ-ում սկիզբ առավ համակարգային ուսումնական տեխնոլոգիաների մշակման և լայնածավալ ներդրման գործընթացը: 	<ul style="list-style-type: none"> • Գիտատեխնիկական ծրագրերի սահմաններում տարբեր մակարդակի կրթական հաստատություններում իրականացվեցին մի շարք աշխատանքներ համակարգային տեխնոլոգիաների մշակման և ներդրման ուղղությամբ, հրատարակվեցին ուսումնական ձեռնարկներ, կազմակերպվեց կրթական ոլորտում համակարգի դասախոսների վերապատրաստում: 	<ul style="list-style-type: none"> • ՏՏ-ը լայնորեն սկսեցին կիրառվել հատկապես բուհական համակարգում, կրթական բարեփոխումների ընթացքում, մասնավորապես կրեդիտային համակարգի կառավարման գործընթացներում, երբ մշակվեց տեղեկատվության ծավալներն անհամեմատ մեծացել էին: 	<ul style="list-style-type: none"> • 22-ն միացավ Բաղրեիայի համակարգին և սկսվեց կրթության արդիականացման ու համաշխարհային կրթական տարածությունում ընդգրկման փուլը՝ իրականացվող բազմաթիվ ծրագրերով:

Գծապատկեր 3.1.2. ՀՀ կրթության տեղեկատվայնացման գործընթացի ձևավորման և զարգացման փուլերը⁶

Որպես հաջորդ՝ V փուլ, կարող են համարվել առաջարկվող՝ **ՀՀ կրթության տեղեկատվայնացման ազգային հայեցակարգի** ընդունման և իրագործման գործընթացները, որոնց նախադրյալները հիմնականում առկա են մեր երկրում:

Այսպիսով, ՀՀ-ում իրականացվել են որոշակի աշխատանքներ քննարկվող խնդրի ուղղությամբ, սակայն դրանք դեռևս բավարար չեն, և շարունակական ու հետևողական միջոցառումների անցկացումն անհրաժեշտություն է, մասնավորապես՝

1. Կրթական և դաստիարակության գործընթացների, ինչպես նաև ուսումնական հաստատություններում գիտական հետազոտությունների տեղեկատվայնացում՝ հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացում, բարձրագույն կրթության տեղեկատվայնացման գործընթացի գիտամեթոդական աջակցություն: Կրթության տեղեկատվայնացման ոլորտում գիտական գործունեությունը կարգավորող գիտատեխնոլոգիական միասնական քաղաքականության մշակման նպատակով համապատասխան մարմնի հիմնադրում, որը կիրականացնի կրթության տեղեկատվայնացման գործընթացը՝ հայեցակարգի կիրառմամբ:

⁶ Գծապատկերը կազմել է հեղինակը:

2. Բարձրագույն կրթության և գիտության համակարգի ժամանակակից տեղեկատվական միջավայրի առկայություն, որի արդյունավետ օգտագործմանը կնպաստի կրթության տեղեկատվայնացման կազմակերպական ենթակառուցվածքների ստեղծումը՝ ապահովելով հատկապես բարձրագույն կրթության տեղեկատվայնացման գործընթացի իրականացում:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել, որ առաջարկվող հայեցակարգի ընդունումը, դրա հետևողական կիրառումը հասարակության մեջ կձևավորեն «տեղեկատվական հմտություններ»՝ ըստ որոնց ՀՀ-ում կբարձրանա կրթության արդյունավետության մակարդակը:

Աղյուսակ

Առաջարկվող՝ կրթության տեղեկատվայնացման ազգային հայեցակարգի ընդունման և իրագործման ակնկալվող արդյունքներ⁷

N	Ակնկալվող արդյունքներ	Նկարագրություն
1.	Սոցիալ-տնտեսական	<ul style="list-style-type: none"> • կրթության համակարգի ներուժի պահպանում և զարգացում • կրթության արդյունավետության և որակի բարձրացում • բարձրագույն և հետբուհական կրթության կառուցվածքային վերակազմավորում՝ տնտեսական և սոցիալական բարեփոխումների համապատասխան • կրթության անհատականացում • ուսանողների և գիտամանկավարժական անձնակազմի միջազգային ակադեմիական շարժունության ակտիվացում • ազգային կրթական համակարգի թափանցիկության ապահովում և դրա ինտեգրում համաշխարհային կրթական միջավայրին
2.	Գիտատեխնիկական	<ul style="list-style-type: none"> • կրթության համակարգի տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծում • կրթության կառավարման տեղեկատվական-վերլուծական համակարգի ստեղծում • կրթության ոլորտում SCS ստանդարտացման և լիցենզավորման համակարգի ստեղծում • կրթական համակարգի կորպորատիվ ցանցի ստեղծում • կրթության տեղեկատվայնացման նյութատեխնիկական բազայի ստեղծում, զարգացում և ընդլայնում
3.	Մանկավարժական	<ul style="list-style-type: none"> • ինֆորմատիկայի հիմնարար դասընթացի ներդրում՝ անընդմեջ կրթության բոլոր մակարդակներում՝ դպրոցից մինչև հետբուհական • կրթական գործընթացում SCS կիրառման գիտականորեն հիմնավորված մեթոդաբանության մշակում • համակարգչային ուսուցման արդյունավետ միջոցների մշակում և ներդրում • համապատասխան ուսումնական հաստատություններում առավել մրցունակ ավտոմատացված կրթական համակարգերի ներդրում

⁷ Աղյուսակը կազմել է հեղինակը:

Գրականություն

«Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության տեղեկատվայնացման և տեղական տեղեկատվական հասարակության զարգացման քաղաքականության» հայեցակարգ, ՀՀ կառավարության որոշում, հաստատվել է 19.03.2014 թ., էլ. աղբյուր՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/03/11-20_1ardz.pdf (25.05.2018):

ՀՀ սահմանադրություն (2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով), ընդունվել է 06.12.2015 թ., հոդված 39:

«ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշում:

Григорьев С.Г. 2005, Информатизация образования. Фундаментальные основы [текст]/С.Г. Григорьев, В.В. Гриншкун, Москва, МГПУ, 231 с.

Дылян Г.Д. 2005, Модели управления процессами комплексной информатизации общего среднего образования [текст]/Г.Д. Дылян, Э.С. Ратобыльская, М.С. Цветкова, Москва, изд. "Бином. Лаборатория знаний", 112 с.

Ершов А.П. 2006, Ученый и человек. Отв. ред. А.Г. Марчук, Новосибирск, изд. СО РАН, 504 с.

Информационные и коммуникационные технологии в дистанционном образовании, специализированный учебный курс 2006, под ред. М.Г. Мура, Институт ЮНЕСКО по информационному образованию, Москва, изд. "Обучение-Сервис", 16 с.

Роберт И.В. 2014, Теория и методика информатизации образования. Психолого-педагогический и технологический аспекты: [монография], Москва, "Бином. Лаборатория знаний", 400 с.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱՅՆԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Մարիանա Քոչարյան

Կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման ու կրթության տեղեկատվայնացման գործընթացները Հայաստանում սկսվել են դեռևս խորհրդային տարիներին, սակայն պետք է նշել, որ կրթության ոլորտում ՏՀՏ ներդրումը, լինելով կրթության համակարգի փոխակերպման և զարգացման կարևորագույն գործոն, ունի մի շարք տեսամեթոդական խնդիրներ: Թվային տնտեսությունում կրթության ոլորտում ՏՀՏ աճող դերը նոր պահանջներ է ներկայացնում նաև դրանց տեսամեթոդական և գործնական հայեցակարգերի գիտական հիմնավորման առումով:

Կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման, ինչպես նաև ոլորտի տեղեկատվայնացման գործընթացի համալիր իրականացման և զարգացման նպատակով ՀՀ կրթության ոլորտի տեղեկատվայնացման ազգային հայեցակարգի ձևավորման անհրաժեշտություն է առաջացել՝ համապատասխան կառուցակարգերով:

Բանալի բառեր՝ կրթության տեղեկատվայնացում, հայեցակարգ, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ, տեղեկատվական հմտություններ, թվային տնտեսություն, տեղեկատվական հասարակություն, հեռավար կրթություն:

НЕОБХОДИМОСТЬ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛЬНОЙ КОНЦЕПЦИИ ИНФОРМАТИЗАЦИИ ОБРАЗОВАНИЯ В РА

Мариана Кочарян

Процессы информатизации и применения ИКТ в сфере образования РА были задействованы ещё в советские годы, однако следует отметить, что, являясь важнейшим фактором развития и преобразования образовательной системы, процесс внедрения сталкивается с рядом теоретико-методических задач. Растущая роль ИКТ в сфере образования в условиях цифровой экономики выдвигает новые требования в отношении научной обоснованности теоретико-методических и практических концепций. В целях применения ИКТ в сфере образования, а также комплексного осуществления и развития информатизационного процесса возникла необходимость в формировании национальной концепции информатизации сферы образования РА с соответствующими механизмами.

Ключевые слова – информатизация образования, концепция, информационные и телекоммуникационные технологии, информационные навыки, цифровая экономика, информационное общество, дистанционное образование.

THE NEED TO FORMULATE A NATIONAL CONCEPT OF EDUCATIONAL INFORMATIZATION IN RA

Mariana Kocharyan

The processes of using ICT and education informatization in Armenia began in Soviet times, however, it should be noted that the contribution of ICT to the ed-

ucation sector, which is the most important factor in the education and development of education, is a series of electoral problems.

The growing role of ICT in the digital economy is also introducing new requirements for scientific substantiation of methodological and business concepts. In order to comprehensively implement and develop ICT in the field of education, as well as sectorization of the sector, the need appeared to formulate the national education system concept in Armenia.

Key words – informatization of education, concept, information and telecommunication technologies, information skills, digital economy, information society, distance education.